ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Վճարովի ծառայությունների մատուցման թիվ ՄՔ-002/01-23-01

ք. Հրազդան « 08 » փետրվարի 2023թ.

ՀՀ Կոտայքի մարզպետարանը ի դեմս մարզպետարանի գլխավոր քարտուղար Լևոն Պետրոսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության համաձայն, այսուհետ՝ Պատվիրատու, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հունվարի 26-ի N118-Ն որոշումը, մի կողմից և «Մենեջմենթ Քոնսալթինգ» ՍՊԸ-ն հետագայում՝ Կատարող, ի դեմս տնօրեն Լուսինե Հարությունյանի, մյուս կողմից, ով գործում է ընկերության կանոնադրության համաձայն, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կատարողը պարտավորվում է տրամադրել գնահատման հաշվետվություններ՝ Պատվիրատուի կողմից գնահատման առաջադրանքի վերաբերյալ.

ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Բջնի բնակավայրի 1-ին փողոց 12-րդ փակուղի 4 բնակելի տուն հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-019-0023-0011) և Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք Բջնի բնակավայրի 1-ին փողոց 12-րդ փակուղի 2 հողամաս (կադաստրային ծածկագիր՝ 07-019-0023-0020) հասցեներում գտնվող անշարժ գույքերի շուկայական արժեքի որոշում գույքերը պետության կարիքների համար ձեռք բերելու նպատակով:

1.2 Պատվիրտուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների դիմաց:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման արժեքը կազմում է՝ 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

2.2 Ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը փոխանցվում է պայմանագիրը կնքելուց հետո 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կատարողը պարտավորվում է՝

ա/ Աշխատանքներն իրականացնել մինչև երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

բ/ Աշխատանքներն իրականացման սկիզբ է համարվում հետազոտման ենթակա օբյեկների և անհրաժեշտ ելակետային տվյալների տրամադրման օրը:

3.2 Պատվիրատուն պարտավորվում է՝

ա/ Համապատասխան պայմաններ ստեղծել աշխատանքներն անցկացնելու համար և այդ նպատակով Կատարողին տրամադրել ելակետային տվյալներ, տեղեկատվություն /բանավոր կամ գրավոր/ և անհրաժեշտ փաստաթղթեր:

բ/ Պայմանագրով նախանշված ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված վճարումը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Վեճեր առաջանալու դեպքում հարցը լուծվում է բանակցությունների կամ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները ժամանակին չկատարելու կամ մասամբ կատարելու դեպքում կողմերը կրում են նաև պատասխա-

նատվություն ՀՀ գործող օրենսդրությամբ և չեն ազատվում իրենց վրա դրված պարտականությունները ամբողջությամբ կատարելուց:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կողմերը պարտավոր են պահպանել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների գաղտնիության սկզբունքը:

5.2 Կատարողը և Պատվիրատուն պատասխանատվություն չեն կրում պետական մարմինների կողմից եզրակացության պահանջի դեպքում, եթե վերջիններս համաձայն գործող օրենսդրության ունեն դրա իրավունքը:

6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրելու պահից:

6.2 Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները իրավաբանական ուժ կունենան միայն գրավոր ձևակերպվելու և երկկողմանի հաստատվելու դեպքում:

6.3 Սույն պայմանագիրը կարող է լուծվել՝

6.3.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3.2 Կողմերից մեկի պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում:

6.4 Կողմերն ազատվում են պատասխանատվությունից՝ պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում, եթե այդպիսիք կապված են եղել գործող օրենսդրությամբ որոշվող անհաղթահարելի ուժի հետ:

6.5 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու իրավահավասար օրինակից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ Կոտայքի մարզպետարան,	«Մենեջմենթ Քոնսալթինգ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Կենտրոն	Հասցե՝ ՀՀ ք. Երևան Արշակունյաց 5 թիվ
թաղամաս, Սահմանադրության	314
հրապարակ, 1 շենք	Հեռ. +37491 490 694
ՀՎՀՀ-03014577	ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ
Գանձապետական հաշիվ 900121001706	Հ/Հ 19300753863300
	ՀՎՀՀ 02861734
Մարզպետարանի գլխավոր քարտուղար	
Լևոն Պետրոսյան	
/ստորագրություն/	տնօրեն /ստորագրություն/ Է.Հարությունյան
Կ.Տ.	Կ.Տ.